

Միսաք Մեծարենց

Մարմնի վերք, սրտի վերք

Մարմնի վերքը՝ արտաբացված դանակե՝
Ի՛նչ արցունքներ դառնակայլակ կը քամե.
Ի՛նչ հուզումով ու տխրությամբ համակե,
Մարմնի վերքը՝ արտաբացված դանակե.

Սրտի վե՞րքը, ո՛հ, դառնագույն է, Աստվա՛ծ,
Սևով անքակ, խոցերով ժանտ է պատած
Խեղճ ու թշվառ կամ տարամերժ ու լքված
Սրտի վե՞րքը, ո՛հ, դառնագույն է, Աստվա՛ծ:

Մարմնի վերքը սպեղանի ունի բույժ,
Անցնելով նա մոռացուկ կ'ըլլա շան կանուխ,
Ջանգակ չունի նա տխրահունչ, մահագույժ.

Սրտի վերքը մինչ գերեզմանն երկարած
Ուղի մ'ունի, արցունքներու գերթ մեկ ուղի.
Սպեղանին անոր երկինքն է պահված:
1901, հունիս

Յատուկ Պոէմ